

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի

Տնօրեն՝  Ի. Վարդանյան
25.11.2019թ.

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

**SWOT
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

ԵՐԵՎԱՆ 2019

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ Քոլեջ) «Երևանի տնտեսա - իրավագիտական համալսարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցված ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 03.05.1995թ., գրանցման № 286.080.01196, պետական գրանցման վկայական՝ 03 Ա060675) առանձնացման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը և շարունակում է իր գործունեությունը և առաքելությունը՝ պահպանելով իր բարի հանրավն ու նաև ճանաչումը, իչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Քոլեջն ունի իր ֆիրմայի անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն) գրառումներով ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր, խորհրդանիշ, ինչպես նաև օրենքով սահմանված կարիգով գրանցված ապրանքային առևտրային և այլ նշաններով անհատականացնող այլ միջոցներ:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից հավատարմագրվել է 2007 թ.-ին: Քոլեջն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի գործունեությունը նպատակաուղղված է՝ միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հանրակրթության ՀՀ օրենքներով նախատեսված կրթական ծրագրերի իրականացմանը:

Քոլեջն ունի շենքային բավարար պայմաններ, վարձակալությամբ որը գտնվում է Արշակունյաց 40 հասցեյում:

Քոլեջի դասախոսական կազմը համալրված է մասնագիտական բազմամյա փորձառություն ունեցող մանկավարժներով, մասնագետներով և բժիշկներով:

Քոլեջում իրականացվում են հիմնական ընդհանուր և միջնակարգ 4 կրթական ծրագրեր, գործում է ուսումնական մասը, 7 ամբիոն: Ուսումնական և մասնագիտական աշխատանքներն իրականացնում են 21 դասախոսներ, այդ թվում 5-բժիշկներ:

Քոլեջն սերտորեն համագործակցում է հանրապետության և օտարերկրյա հաստատությունների ու կազմակերպությունների հետ:

Անցած 24 տարիների ընթացքում Քոլեջի ղեկավարությունը, դասախոսական կազմը, ամբողջ կոլեկտիվը հետևողականորեն ձգտել են իրականացնել պետական կրթական չափանիշներին համապատասխանող ուսումնական գործընթաց:

Քոլեջն իր գերակա խնդիրն է համարում կրթության որակի բարձրացումը, աշխատաշուկայի պահանջարկի բավարարումը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու հնարավորության մեծացումը:

Հաշվի առնելով Քոլեջում իրականացվող հիմնարար բարեփոխումները, ինստիտուցիոնալ հավատարմագրմանն ընդառաջ, մշակված նոր 2019-2024թթ. ՌԶԾ-ի մեկնարկը անհրաժեշտություն ռաջացավ իրականացնել Քոլեջի գործունեության SWOT վերլուծություն: Քոլեջում իրականացվող հիմնարար բարեփոխումները նպատակային և ադյունավետ պլանավորելու համար կատարվել է հակիրճ SWOT վերլուծություն, որոնք ընդգրկում են.

1. Ռազմավարական կառավարում
2. Ուսումնական գործընթաց
3. Անձնակազմի և ռեսուրսների կառավարում

Ծանոթություն:

Հետևյալ SWOT վերլուծությունը ներկայացված է բավականին հակիրճ և համառոտ:

Այն չի պարունակում Քոլեջի կողմից իրականացվող ընթացակարգերի և քաղաքականության նկարագրությունները, այլ ներառում է 2016-2019թթ. դրությամբ Քոլեջի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:

Զեկույցը ամբողջական պատրաստվել է 2019թ. նոյեմբերի 11-ին:

SWOT վերլուծության աշխատանքային խումբ

Անուն, Ազգանուն	Պաշտոնը հաստատությունում
Նարինե Եգորյան	Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
Լիլիթ Հարությունյան	Ուսումնական մասի վարիչ
Անահիտ Գյոզալյան	Կադրերի բաժնի վարիչ
Ասյա Սարգսյան	Հաշվապահ

1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌՎԱՐՈՒՄ

1.1. Որակի ապահովում	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Որակի ներքին ապահովման համակարգի մշակույթի ձևավորում: ▪ Որակի ապահովման համակարգի գործընթացները իրականացնելու նպատակով տրամադրվող անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: ▪ Քոլեջում որակի ապահովման անկախ պատասխանատու, ով համակարգում է ստորաբաժանումների աշխատանքները: ▪ Թափանցիկ Որակի ապահովման համակարգ: ▪ Որակի ապահովման համակարգողները պարբերաբար մասնակցում են տարբեր սեմինարներին, հանդիպումներին և վերապատրաստումներին: ▪ ՌԶԾ-ում հստակ ձևակերպված և ամրագրված առաքելություն, նպատակներ և խնդիրներ: ▪ Հիմնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական գործունեություն իրականացնելու նպատակով համապատասխան պայմանների և նյութատեխնիկական ռեսուրսների առկայություն: ▪ Կոռուպցիոն երևույթների 100% բացակայություն: 	<ul style="list-style-type: none"> ▪ Որակի ապահովման մշակույթը դեռ ձևավորման փուլում է: ▪ Ոչ բոլոր շահառուներն են ընկալում ՈԱ ներքին համակարգի դերը, ինչի արդյունքում ընդունված որոշումները ուշ են կյանքի կոչվում: ▪ Սեփական շենքի բացակայություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Որակի ապահովման մշակույթի կատարելագործում ▪ Անձնակազմի պարբերաբար վերապատրաստումներ: ▪ Միջազգային ծրագրերի մասնակցություն: ▪ Շուկայի պահանջարկի աճով պայմանավորված նոր ծրագրերի (լրացուցիչ, դասընթացների) ներդրում: ▪ Համագործակցության ընդլայնում և փորձի փոխանակում արտասահմանյան կառույցների հետ: 	<ul style="list-style-type: none"> ▪ ՈԱ համակարգում արտաքին շահակիցների մասնակցության ցածր մոտիվացիա: ▪ Միգրացիայի արդյունքում դիմորդների և մասնագետների արտահոսք: ▪ Մասնավոր քոլեջների համար ուսանողների ընդունելության ոչ նպաստավոր համակարգ՝ ուսանողների թվի կտրուկ նվազում:
1.2. Կառավարման համակարգ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Քոլեջը, որպես ՍՊԸ-ն անկախ է կառավարման համակարգում: ▪ Քոլեջի նոր ՌԶԾ-ից բխող կառավարման սխեմայի առկայություն: ▪ Կառավարման համակարգի կարգավորման վերանայած ընթացակարգերի առկայություն: ▪ Քոլեջի ղեկավարության կողմից սեփական թույլ կողմերի գիտակցում և աստիճանական ուժեղացում: 	<ul style="list-style-type: none"> ▪ Պաշտոնական վեբ կայքի բացակայություն: ▪ Գովազդային և տեղեկատվական նյութերի ոչ բավարար բազա: ▪ Կառավարման համակարգում որակի ապահովման սկզբունքների՝ պլանավորման,

<ul style="list-style-type: none"> ▪ Կառավարման և որոշումների կայացման մարմիններում ներքին և արտաքին շահակիցների ներգրավում, գործընթացների թափանցիկության և անկողմնակալության ապահովում: ▪ Նպատակների և խնդիրների իրականացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նոր պլանների առկայություն: 	<p>իրականացման, գնահատման, բարելավման ոչ լիարժեք կիրառում:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Ենթակառուցվածքների միջև թույլ արտահայտված հետադարձ կապ:
ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Քոլեջի աշխատակիցների ամբողջական ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում: ▪ ՈԱ և Քոլեջի կառավարման մարմիններում ներքին և արտաքին շահակիցների միջև համագործակցության ընդլայնում: ▪ Քոլեջի պաշտոնական վեբ կայքի ստեղծում և շահագործում: ▪ Պարբերաբար ուսումնասիրությունների հիման վրա վարչական կառույցների և ռեսուրսների վերանայում: ▪ Կառավարման համակարգի կատարելագործում (Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրում, հետադարձ կապի կատարելագործում): ▪ Ստորաբաժանումներում կադրերի պարբերաբար վերապատրաստում: ▪ Հայաստանյան և միջազգային ՄՄՈւՀ-ի հետ համագործակցության ընդլայնում: ▪ Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ակտիվացում: 	<ul style="list-style-type: none"> • Արտաքին խոչընդոտների հաղթահարման դժվարություններ: • Անառողջ մրցակցային դաշտի առկայություն: • Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխություններ:

ԹՈՒՅՆ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ

Քոլեջի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են որդեգրած առաքելությանը և համահունչ են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Ուշադրության կենտրոնում են SWOT վերլուծության արդյունքում վերհանած թույլ կողմերը, որոնք ռիսկ են հանդիսանում Քոլեջի առաքելության իրականացման համար: Այն վերացնելու նպատակով նախատեսվում են մի շարք գործընթացներ, մասնավորապես՝

1. Աշխատանքներ տանել Քոլեջի գործունեության վերաբերյալ գովազդային և տեղեկատվական նյութերի բազան բարելավելու ուղղությամբ:
2. Քոլեջում կառավարման համակարգում՝ պլանավորում, իրականացում, գնահատում և բարելավում (ՊԻԳԲ) գործընթացի ամբողջական և լիարժեք կիրառում:

3. Բարելավել ենթակառուցվածքների միջև հետադարձ կապի մեխանիզմները և ՈԱ համակարգում բարձրացնել արտաքին շահակիցների մասնակցության մոտիվացիան:
4. Մշակել և ներդնել արտաքին խոչընդոտների հաղթահարման մեխանիզմներ (մշակել ռիսկերի կառավարման ընթացակարգ, որը հնարավորություն կնձեռի մեղմացնել ռիսկերը անառողջ մրցակցային դաշտի առկայության պայմաններում):
5. Միջոցներ ձեռնարկել Քոլեջում ՈԱ մշակույթի կատարելագործման ուղղությամբ: Նախատեսվող աշխատանքներում ընդգրկել բոլոր շահառուներին (դասախոս, ուսանող), արդյունքում ՈԱ ներքին համակարգի վերաբերյալ ընդունված որոշումները արագ կյանքի կկոչվեն:
6. Աշխատանքներ տանել սեփական շենքի ձեռքբերմա ուղղությամբ:
7. Դիմորդների և մասնագետների արտահոսքի, մասնավոր ՄՄՈՒՀ-ի համար ուսանողների ընդունելության ոչ նպաստավոր կենտրոնացված համակարգի պայմաններում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ Քոլեջում նվազագույն քանակակազմ ապահովել ուղղությամբ:

2. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2.1. Մասնագիտական կրթական ծրագրեր	
ՌԻԺՆԴ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Գործող ՊԿԶ-ի համապատասխան մշակված Քոլեջի ՄԿԾ-ի փաթեթներ, ըստ գործող մասնագիտությունների: ▪ Հիմնական անձնակազմի մասնագիտական բարձր որակավորում ▪ Դասախոսական հիմնական անձնակազմ: ▪ Իրականացված ուսումնական գործընթացի պլան արտաքին գնահատման (բենչմարքինգ) նպատակով: ▪ Գործող առարկայական դասընթացի ծրագրերի մշակված նոր ձևաչափ: ▪ Ուսումնառության գործընթացում գիտելիքների գնահատման տարբեր մեթոդների կիրառում: ▪ ՄԿԾ-ի իրականացման համար համապատասխան ներքին միջավայր, անհրաժեշտ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներ: ▪ Արձանագրված փաստեր Քոլեջի շրջանավարտների ՀՀ բարձրագույն կրթությունը շարունակելու և մասնագիտությամբ աշխատելու վերաբերյալ: 	<ul style="list-style-type: none"> ▪ ՄՄՈՒՀ-ն կառավարման համակարգի խորքային բենչմարքինգի արդյունքներ: ▪ Ներքին և արտաքին շահակիցների թույլ իրազեկվածությունը, ներգրավվածությունը կրթական ծրագրերի մշակման, ներդրման և իրականացման գործում: ▪ Ուսումնական պլանների միասնական ձևաչափ: ▪ Գնահատման ոչ բամագործոնային համակարգ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ ԿԾ բարելավում, դասախոսական կազմի վերապատրաստում: ▪ Դրամաշնորհային ծրագրերին մասնակցություն: ▪ Ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար մշակել և ներդնել գնահատման բազմագոծոնային համակարգ: ▪ Գործող ՄԿԾ-ի տեղեկագրքի պատրաստում և հրատարակում: ▪ Առաջատար ՄՄՈւՀ-ի և բուհերի հետ համագործակցության ընդլայնում: ▪ Միջազգային կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ փորձի փոխանակման միջոցառումների ակտիվացում: 	<ul style="list-style-type: none"> ▪ Կրթական միջավայրի և ներկայացվող պահանջների անընդհատ փոփոխություն: ▪ ՀՀ ՊԿԶ-ի խիստ պահպանում:
2.2. Քննական համակարգը և քննությունների կազմակերպում	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Գիտելիքների ստուգման տարբեր ձևերի կիրառում (գրավոր, բանավոր, թեստային, ընթացիկ և ամփոփիչ, ավարտական որակավորման քննություններ): ▪ ՄԿԾ-ի ուսպլաններում ամրագրված հաստատուն քննական ժամանակացույց: ▪ Քննական գործընթացի պատասխանատվությունը՝ դասախոս-ամբիոն սկզբունքով: ▪ Քննական արդյունքների հրատարակայնացում ամբիոնի կողմից: ▪ Գիտելիքների ստուգման, քննական արդյունքների բողոքարկման, բարձր առաջադիմության խրախուսման ընթացակարգերի առկայություն: ▪ Ուսանողների հետ Քոլեջի ղեկավարության պարբերաբար կազմակերպվող հանդիպումներ: 	<ul style="list-style-type: none"> ▪ Գիտելիքի գնահատման միագործոն համակարգ: ▪ Խրախուսման ոչ բավարար ֆինանսական միջոցներ: ▪ Բարձր առաջադիմություն ցուցաբերելու ոչ լիարժեք ցանկություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Ուսումնական գործընթացի կառավարման հատուկ համակարգչային ծրագրի մշակում և գործարկում (ուսումնական խմբերի առաջադիմության թվային անձնագրեր, ակադեմիական, ստուգարքային և քննական տեղեկագրեր): ▪ Շահառուների (գործատու) ներգրավվածության աստիճանի մեծացում ավարտական որակավորման քննություններին: ▪ Կազմակերպություններում ամփոփիչ ավարտական քննությունների կազմակերպում: ▪ Հետադարձ կապի ապահովման ընդլայնում 	<p>Գնահատման գործընթացի վրա մարդկային տարբեր գործոնների ազդեցություն:</p>

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ

Ուսումնական գործընթացի Քոլեջի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ամբողջովին համապատասխանում են նոր 2019-20254 թթ. ՌԶԾ-ի որդեգրած առաքելությանը և համահունչ են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Ուշադրության կենտրոնում են SWOT վերլուծության արդյունքում վերհանած թույլ կողմերը, որոնք ռիսկ են հանդիսանում Քոլեջի առաքելության իրականացման համար: Այն վերացնելու նպատակով նախատեսվում են մի շարք գործընթացներ, մասնավորապես՝

1. Բարելավել գործող ՄԿԾ-ի իրականացման համար մարդկային ռեսուրսների հավաքագրման հնարավորությունները:
2. Համագործակցության շրջանակներում համատեղ ՄԿԾ-ների մշակման և իրականացման փորձի ուսումնասիրում:
3. Մշակել և կիրառել ՄԿԾ-ների մշակման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավման մոտիվացիայի մեխանիզմներ:
4. Մշակել ռիսկերի կառավարման և նոր մարտահրավերներին դիմակայելու միջանիզմներ:
5. Վերանայել ՄՌԿ քաղաքականությունը և գործող խրախուսման ընթացակարգերը:

3. ԱՆՁԱԿԱԶՄԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

3.1. Դասախոսական կազմ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Դասախոսական կազմի պաշտոնի անձնագրի առկայություն: ▪ Դասախոսական կազմի երիտասարդացման միտում: ▪ ՄԿԾ-ի համապատասխան բարձր որակավորում ունեցող կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: ▪ Դասախոսական կազմի գնահատման քաղաքականություն և գործիքակազմ: ▪ Քոլեջի շրջանավարտներով ուսումնաօժանդակ կազմը համալրելու քաղաքականություն: ▪ Աշխատանքային բարձր կարգապահություն: 	<ul style="list-style-type: none"> ▪ Վերապատրաստման և որակավորման բարձրացման քաղաքականության բացակայություն: ▪ Որոշ դասախոսների մոտ գիտական և հետազոտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիայի բացակայություն: ▪ Ուսանողների թվաազմից կախված սուղ ֆինանսական միջոցներ:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստումների և ատեստավորումների կազմակերպում: ▪ Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմների կատարելագործում: ▪ Դասավանդողների վերաբերյալ ուսանողների սոցիարցման ձևավորված մշակույթի 	<ul style="list-style-type: none"> ▪ Դասախոսական կազմի գիտահետազոտական ոլորտում ոչ բավարար մասնակցություն: ▪ Ինքնակրության և

<p>կատարելագործում:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Դասախոսների մասնագիտական որակների զարգացման հնարավորությունների ընդլայնում և բարելավում: ▪ Համագործակցություն արտասահմանյան ուսումնական հաստատույունների և կազմակերպությունների հետ: 	<p>ինքնակատարելագործման ցանկության բացակայություն:</p>
3.2. Ուսանողական համակազմ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Դիմորդների հավաքագրման տարբեր մեխանիզմների առկայություն: ▪ Քոլեջի կառավարման գործընթացում ներգրավված ուսանողներ: ▪ Մատուցվող կրթական ծառայությունների որակի ստուգման մեխանիզմների ձևավորում: ▪ Ուսանողներին իրավունքների, շահերի և աջակցության քաղաքականության առկայություն: ▪ Օտարերկրյա ուսանողների թվի դինամիկ աճ: 	<ul style="list-style-type: none"> ▪ Քոլեջի սահմանափակ մասնակցություն ընդունելության գործընթացին: ▪ Հայ դիմորդների թվի նվազում:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Խորհրդատվական ծառայությունների բարելավում: ▪ Հետադարձ կապի ապահովման գործիքների զարգացում: ▪ Ուսանողների շարժունության խթանում: ▪ Օտար ազգի դիմորդների հավաքագրում, լեզվով ուսուցման կազմակերպում: 	<ul style="list-style-type: none"> ▪ Հանրապետությունում դիմորդների թվի նվազում:
3.3. Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Իրականացվող ՄԿԾ-երի պահանջները բավարարող ուսումնական ռեսուրսների արդիականացում և համալրում: ▪ Երկարաժամկետ վարձակալած ուսումնաօժանդակ տարծքի առկայություն: ▪ Բարեկարգված կահավորված լսարաններ, ուսումնական կաբինետներ: ▪ Ֆինանսական միջոցների պլանավորման քաղաքականության և բաշխման ճկուն մեխանիզմներ: 	<ul style="list-style-type: none"> ▪ Ֆինանսական ռեսուրսների հավաքագրման ոչ ֆիքսված ժամանակացույց: ▪ Քոլեջի ստորաբաժանումների միջև փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային ցանցի բացակայություն: ▪ Սեփական շենքի բացակայություն: ▪ Սուղ ֆինանսական միջոցներ:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ul style="list-style-type: none"> ▪ Ֆինանսական միջոցների խնայողության միջոցով սեփական շենքի գնում: 	<ul style="list-style-type: none"> ▪ Միջազգային քաղաքական ճգնա-

<ul style="list-style-type: none"> Միջազգայնացման շնորհիվ ֆինանսական եկամուտների ավելացում: 	Ժամի հնարավոր նոր դրսևորումներ:
3.4. Արտաքին կապեր	
ՌԻՑԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> Գործող նոր ՌԶԾ-իր: Կառավարման առուցվածքում Արտաքին կապերի բաժնի առկայություն, Միջազգային համագործակցության գործող պայմանագրեր: Ուսանողների և դասախոսների փորձի, ուսումնական գործընթացի համատեղ քննարկում և փոխանակում: Հանրապետությունում և արտերկրում վերապատրաստման ծրագրերին դասախոսների մասնակցություն: 	<ul style="list-style-type: none"> Դեռ չգործող Արտաքին կապերի բաժին: Դրամաշնորհային ծրագրերի որոնման հնարավորությունների ոչ լիարժեք կիրառում:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ul style="list-style-type: none"> Միջազգային և տեղական կառույցների հետ համագործակցության ընդլայնում: Առաջավոր փորձի ուսումնասիրման և ներդրման հնարավորությունների ստեղծում և ընդլայնում: Միջազգային տարբեր կառույցներից ստացված գիտաժողովների հրավերներ: 	<ul style="list-style-type: none"> Պետական աջակցության բացակայություն

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ

Մարդկային ռեսուրսների կառավարման Քոլեջի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ամբողջովին համապատասխանում են նոր 2019-2024 թթ. ՌԶԾ-ի որդեգրած առաքելությանը:

Ուշադրության կենտրոնում են SWOT վերլուծության արդյունքում վերհանած թույլ կողմերը, որոնք դիսկ են հանդիսանում Քոլեջի որդեգրած առաջնային նպատակների իրականացման համար: Այն վերացնելու նպատակով նախատեսվում են մի շարք գործընթացներ, մասնավորապես՝

1. Մշակել և ներդնել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման կանոնակարգ և ժամանակացույց:
2. Մշակել մեխանիզմներ բարձրացնելու դասախոսների մոտ գիտական աստիճան և կոչում ստանալու մոտիվացիան:
3. Դասախոսական կազմի գիտական կամ հետազոտական ոլորտում ներգրավվման և մասնակցության ավելացում:
4. Վերանայել դիմորդների համար տեղեկատվության տրամադրման և տարածման մեխանիզմները:
5. Ակտիվացնել Արտաքին կապերի բաժնի աշխատանքները, օտար ազգի դիմորդներ ներրավլու նպատակով:
6. Արտագաղթի աճող տեմպին զուգընթաց մշակել դիմակայելու համալիր միջոցառումներ: